Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ գ. Ոսկեհասկ փ. 11 շ. 27
էլ. հասցե՝ voskehask@schools.am

«Անդրանիկ Հարությունյան» ԱՁ
Հասցե՝ք.Գյումրի Կ. Դեմիրճյան 63
էլ. Փոստ՝andranik0222@yandex.ru

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Շիրակի մարզի «Ոսկեհասկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Անդրանիկ Հարությունյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 06.08.2024թ. կնքված «ՇՄՈՄԴ-ՄԱԱՊՁԲ-2024/2-սն» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրերը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ միակողմանի լուծելու վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզի «Ոսկեհասկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի որոշումը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ «Անդրանիկ Հարությունյան» ԱՁ-ն) պարտավորվում է ՀՀ Շիրակի մարզի «Ոսկեհասկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սենդամթերքը(այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել կնքված Պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև դեկտեմբերի 25-ը:

ԱՁ-ի հանկարծակի մահվան պատճառով տեղի է ունեցել ֆորս-մաժորային իրավիճակ:

Անդարնիկ Հարությունյան ԱՁ-ն հանկարծամահ է եղել, ներկայացվել է մահվան վկայական:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը չի կարող իրականացնել պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարումը, ուստի ՀՀ Շիրակի մարզի «Ոսկեհասկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը՝ հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, միակողմանի լուծարվում է 06.08.2024թ. ընկերության հետ կնքված «ՇՄՈՄԴ-ՄԱԱՊՁԲ-2024/2-սն» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիրը՝համարելով այն ամբողջությամբ լուծված:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն ծանուցմամը Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն հրապարակվում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Տնօրեն Հ. Խաչատրյան